



## 42. ՄԵՂԱՎՈՐՆ Ի ԴԺՈՒՔ, ԱՐԴԱՐՆ Ի ԴՐԱՒՏ

Ժամանակով մըջ Բիթլիսա քաղքին Մլքո աղա անունով մարդ մե կէղնի, հարստութենի հետ շատ տմաքար ու աղա կէղնի, Ղֆախիր-Ֆուխարոց կը գուպ ու ջուպ, փարա կիտա պարտք, մեկին տաս կը վերցու, գրկեցին շօգնե, աղքըտներուն ղոնեն կը քշե, ուր կնկան՝ զաթի օր ու արև չի տա, կը կովի հետ, թե չըսօր չորի՞ն շատ կերար, ես քըզի չըսի՞ զատ մ'էփի, չորի՞ն էն խոնխի չառեջ էդ խըդար բան դրիր, դու պտի իմ տուն քանդիս: Խեղճ կնիկ ձեն չը հանե, կէրթա՝ քունջ մե կը նստի, գիլա, կըսե:

— Աստված, ե՛ր հոգիս կաննիս, օր ազատվիմ ըղըրնե:

Աստված գինա վիր հոգին պտի առնե, ընդրա մոտ չըմեն բան հաշվուկ, շափուկ, դրուկ է: Ժամանակ մե չետե Մլքո աղեն կը հիվընդնա, գընկնա ջուկ, կնկան կըսե:

— Պտի մեռնիմ, խիլամթուն, իմ մեռնել չըմ ա՛փսոսա, իմ հարստութե՛ն կափսոսամ:

— Մա՛րդ, — կըսե կնիկ, — չըմեն բան աստծու կամքով է, չըմենքսի կը մեռնինք, ո՞ն է ուր հարստութեն հետ տարի, օր դու տանիս, հմալ ճար մե էնինք, օր բալքի աղեկնաս:

Քանի կէրթա՝ Մլքո աղի ղրութեն կը վատանա, շելնա ջլից, էրկընքեն հոգեառ Գաբրել հրեշտակ գիջնա, օր զհոգին առնե, էրկու օր կը շարչըրվի, վրա իրեքին՝ չոք կը զարկե վըր սրտին, հոգին կաննե ու յալլա՞ կը թոնա էրկինք: Մլքո աղեն կը մեռնի, կէրթա էն դիու ախշարք, օր կէրթա՝ կը խաովի թաժա մեռելներուն, Գաբրել հրեշտակ զէնի լե կը տանն կանգցու աստծու չառեջ: Կը տեսնա

հանդեպ աստված նստուկ աստղերուց շինած թախտին, վրեն սիվ-տակ շոր, սիվտակ մուրուք գիջնա հարի շոքեր: Թաժա մեռելներ կանուկ ին, օր ինք ու Գարրեւ հրիշտակ քնքնին, չիմնան՝ ի՞նչ են էրի ըդոնք մըջ մեր ախշըրին, մեղավորին ճամպին դժոխք, արդա-րին՝ դրախտ:

Աստված չառեջ կը քնքնե խեղճ աղքատ մե:

— Ըսե սա՛նք, դո՞ւ ի՞նչ իս էրի վըր էրկրին,— կը հարցու աստ-ված:

— Ես մորե մերկ, ավուր հացի կարոտ աղքատ ենք, տարին-տըսվերկու ամիս իմ ուտած կտոր մե գարե հաց էր, իմ զատ լե ան-ժուռ շուրվա էր, հավու աչքի շափ եղ չկեր մեջ, իմ շոր լե զաթի կը տեսնաս՝ քըռջ է:

— Գարրեւ՛լ,— հրամանք կիտա աստված,— արդար է, ճամպե դրախտ:

Մլքո աղեն քիչ մե չառեջ գիկա, աստված կը տեսնա, օր էգի կը դողա ու քրտնեք է:

— Դո՞ւ ո՞ն իս:

Մլքո աղեն շուտ մե ուր մտքի մեջ կըսե. «Կանի սուտմ՝ ըսիմ, բալքի չընգնամ դրախտ»:

— Ես,— կըսե Մլքո աղեն,— մեռնիմ քու չոտաց, Մլքոն իմ, շատ հարուստ ենք, հմա տմաքար ու ադա չենք: Իմ տուն շեն էր— իմալ վանք, տաս կը մտներ, քսան գելներ, դրկեցներուն հեր ու ախ-պեր իմ էղի, աղքըտներուն օղորմութեն կիտենք, գեղացոց փարա կիտենք, յա կը բերեն, յա չը բերեն, ըսկի ձեն չը հանենք. ըջու-ես հմլա մարդ ենք:

— Գարրեւ՛լ էգ խըղար մարդու հոգի իս առի, էրկրի աղեկն ու գեջ կը ճանչնաս, իդամլա բարի հարուստ տեսե՞ր իս:

— Զէ՛, վոլա, չըմ տեսերի:

— Է՛,— էլման կը հարցու աստված,— գքու հոգին ի՛մալ տվիր: Տե՛ս, հմա սուտ չըսի՛ս, շըհադ կա չոդա, շըհադ լե հոգեառ Գաբ-րելն է:

— Վո՛լա,— կըսե Մլքո աղեն,— քըզնե ի՛նչ պահիմ, հարի հոգիս տվի՛ չոռսի էկավ գուս:

էդ խոսքի վրեն խեղճ ու կրակ աղքատ մե բանձր կը ծիծղա: Աստված կը հարցու.

— Յորի՞ն կը ծիծղաս:

— Ըպա ի՛մալ չը ծիծղամ, իդա Մլքո աղեն, օր ուր խսեն էրեց՝ չոտուց-գլուխ՝ սուտ է: Ըսիմ գիմ խոսք:— Ես ըդրա դրկեցն ենք:

Քառսուն տարուց չեմբել կը ճանչնամ ըզոր: Վըր ախշըրին ընդրնն  
ամաքար ու ադա շկեր: Կըսե՛՛ն Ես դրկեցնեմուն հեր ու ախպե՛ր իմ  
էղի, աղքատներուն օղորմութե՛ն կիտենք, գեղացոց փարա՛ կի-  
տենք՝ յա բերեն, յա շը բերեն, ըսկի ձեն շը հանե՛նք, ուր տուն յանի  
վա՛նք է էղի, տաս կը մտներ, քսան դելնե՛ր, տո՛, գոթեցուկ, դու  
էն մարդ շի՛ս, օր զշինական Սրքո ձեռ հինգ մեջտյա դրիր, չետե  
հինգ օսկի դուզեր գուպեր: Ես իմ անկշով շըմ լսե՛րի Սրքոյին կըսեր.  
«Սրքո, քըզի կիտամ հինգ մեջտյա պարտք, հմա էնի ուրին-ուրին  
կը մեծնա, դառնա հինգ օսկի, դինա՛ս, Ես աղեկութեն կէնիմ, գեղ  
օր էրթաս, կանիս ի մայղան, գեզացիք պտի հարցուն քըզի, Սրքո,  
դու յո՛ւր էր, դու պտի ըսիս՝ յո՛ւր պտի էղնենք, գացեր ենք Բիթ-  
լիսա քաղաք, զՄըո աղի պարտք հինգ օսկին տվի էկա. գեղացիք  
մըջ չիրար պտի ըսին՝ վոլա, Սրքոն օսկու հետ կը խաղա, ի՛մալ  
էնինք մենք լե խաղանք»: Դու հմալ շը՛սեր: Մկա շըս ա՛մշընա,  
դետին շըս մտնա՛, օր աստծու չառեջ լե սուտ կը խոսաս:

— Օղո՛րդ կըսե, — կը հարցու աստված:

Մըո աղեն ձեն շը հանե, շը գինա ինչ ըսե:

Աստված զգլուխ կը տանե-րերե, զուր սիվտակ մուրուք կը շփե,  
չետե կը դառնա հրեջտակներու մեծին՝ հոգեառ Գաբրիլին.

— Գաբրե՛լ, — կըսե, — զՄըո աղեն թալ ի դոխք, մըջ կպրե  
կարասին:

Գաբրել, հմա հազըր, զուր խարզան կը շփըցու Մըո պառեկին,  
մեկ-էրկու գամփոց դիջու պուպուճկին, կը քջե դեհ ի դոխք՝ մըջ  
կպրե էման կարասին: Զուրի չըսօր Մըո աղեն դես կը դառնա, դեն  
կը դառնա, շը կոնա չոտքեր փրցու, կուպր լե քանի կէրթա՛ կէռա,  
օր ընդրան վառե ու իրիցե, շուրի Քրիստոս գա դատաստան: Հմա՛  
ո՛ն գինա՛ գիկա, թե շէ, մինակ էն գինանք, օր մեղավոր կէրթա ի  
դոխք, արդարն՝ ի դրախտ:

